ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«14» մայիսի 2021 թվական**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

**ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:**
**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝**
Ս.Բալասանյանը, Ա.Ադամյան, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Աղանյան, Ա. Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 20**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
**Որոշումն ընդունվեց**
ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 223-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 22**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**

Գյումրի համայնքի ավագանու անդամներ Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը քվեարկությանը մասնակցեցին օրակարգի 2-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 223-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «5 331 014 618 (հինգ միլիարդ երեք հարյուր երեսունմեկ միլիոն տասնչորս հազար վեց հարյուր տասնութ)» թիվը և բառերը փոխարինել «5 429 162 818 (հինգ միլիարդ չորս հարյուր քսանինը միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր տասնութ )» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «6 085 956 518 (վեց միլիարդ ութսունհինգ միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր տասնութ)» թիվը և բառերը փոխարինել «6 184 104 718 (վեց միլիարդ մեկ հարյուր ութսունչորս միլիոն մեկ հարյուր չորս հազար յոթ հարյուր տասնութ) » թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 19 (ՏԱՍՆԻՆԸ) ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

Գյումրի համայնքի ավագանու անդամ Լ.Բարսեղյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 2-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 19 (տասնինը) համատիրություններին հատկացնել սուբսիդիա՝ 25 200 000 (քսանհինգ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, իրենց կողմից սպասարկվող բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի, դռների պատուհանների և կոյուղագծերի վերանորոգման նպատակով՝ համաձայն հավելվածի:

**2.** Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) ‹‹Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին›› տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ անհրաժեշտ ծախսերի կատարման համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Լիլիթ Մակարյանին պատշաճ իրազեկման օրվան իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**
1. Կազմակերպություններին որպես նվիրատվություն հատկացնել **1 454 300** (մեկ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կտուրի վերանորոգման և արևային ջրատաքացուցիչ ձեռք բերելու համար՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

**6. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 129 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԻՆԸ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**
1. Թվով 129 (մեկ հարյուր քսանինը) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14 -ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի «Մայիսյան տոների կապակցությամբ դրամական օգնություն հատկացնելու մասին» N 69-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի երկրորդ ենթակետում «282 (երկու հարյուր ութսուներկու)» թիվը և բառերը փոխարինել «283 (երկու հարյուր ութսուներեք» բառերով և թվով, «5 640 000 (հինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «5 660 000 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) » թվով և բառերով:

2) որոշումը լրացնել նոր «1.[1] » կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

ա. «1.[1] Թույլատրել համայնքի ղեկավարին՝ կարգի 7-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված գումարի չափով դրամական օգնություն տրամադրել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներին բավարարող ընտանիքներին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման պետի կողմից ներկայացվելիք տեղեկանքների:»,

3) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի (այսուհետ՝ հավելված) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

ա. հոդվածի «52» և «197» տողերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| « | 52 | Իկիլիկյան Հովհաննես Գրիշայի | Տ. Ճարտարապետի 14/10 | 20.000 »: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| « | 197 | Նիկողոսյան Արմեն Յուրիկի | Փաստ Մուշ2-2 թաղ . շ 46, բն 27 | 20.000 »: |

բ. հավելվածը լրացնել նոր «283» տողով՝ հետևյալ բովանդակությամբ

| | | | | |
|---|---|---|---|---|
| « | 283 | Մինասյան Ավետիք Համլետի | Ք. Գյումրի 226/036 | 20.000 »: |

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԻՈԼԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Վիոլետա Սուքիասյանի ընտանիքին՝ որպես դրամական օգնություն, հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը

կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիոլետա Սուքիասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
**Որոշումն ընդունվեց**
ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Անահիտ Վարդանյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
**Որոշումն ընդունվեց**

10. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՖԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ ԵՎՐՈՊԱՅԻ Մ15 ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Բուլղարիայի Հանրապետության Սոֆիա քաղաքում կայանալիք հունահռոմեական ըմբշամարտ մարզաձևի Եվրոպայի Մ15 առաջնությանը գյումրեցի մարզիկ Վահե Հովհաննիսյանի մասնակցությունն ապահովելու համար գործուղման ծախսերը հոգալու նպատակով հատկացնել 380 000 (երեք հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4222) «Արտասահմանյան գործուղումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետին ներկայացնել հաշվետվություն՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ծախսերի վերաբերյալ:
**Որոշումն ընդունվեց**
ԼՍԵՑԻՆ.

11. «ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ» ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. «Արդարության պահանջով» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն 2021 թվականի մայիս ամսից մինչև 2022 թվականի ապրիլ ամիսը ներառյալ յուրաքանչյուր ամիս հատկացնել 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ վարձակալած տարածքի վարձավճարը փոխհատուցելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումները կատարել Գյումրի համայնքի 2021-2022 թվականների բյուջեների 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 200-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 200-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) Որոշման 1-ին կետով հաստատված N3 և N9 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 1-ից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաներին անվճար ընդգրկելու և ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու կարգը

հաստատելու մասին» N33-Ա որոշմամբ հաստատված կարգի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 1-ին կետի «10» թիվը փոխարինել «15» թվով,

2) 2–րդ կետի 2–րդ ենթակետի՝ «զինծառայողների» բառից հետո լրացնել «նաև անհայտ բացակայող ճանաչված անձանց» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԴԻՋԻԹԸԼ ՓՈՄԸԳՐԱՆԵԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը հրավիրեց «Դիջիթըլ Փոմըգրանեթ» ընկերության հիմնադիր Թոդ Ֆաբաքերին՝ Գյումրիում «Դիստրիկտ» էկո թաղամասի կառուցման ծրագրի հետ կապված ընկերության հետագա գործունեությանը ավագանու անդամներին ծանոթացնելու նպատակով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ –0**

Գյումրի համայնքի ավագանու անդամ Ա.Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 14-րդ հարցից, իսկ Հ.Եղիազարյանը այս հարցից չմասնակցեց քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի և «Դիջիթըլ Փոմըգրանեթ» ընկերության միջև Գյումրի քաղաքում համայնքային սեփականություն հանդիսացող Բուլվարային փողոց N55 հասցեի նախկին զորամասի 21 (քսանմեկ) հեկտար մակերեսով հողամասում ՄԱԿ-ի Կայուն զարգացման 17 նպատակների վրա հիմնված, աշխարհում այդ ձևաչափով առաջին կանաչ թաղամասի՝ «Դիստրիկտ»-ի ստեղծման վերաբերյալ համագործակցության պայմանագիր կնքելուն:
2. Համագործակցության պայմանագրի դրույթները մանրամասնել համայնքի ղեկավարի որոշումներով և այլ իրավական ակտերով:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂՈՒ N 3 ՀԱՍՑԵԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 732,9 ԵՎ 2364,29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 22**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 1 (Ա.Գրիգորյան)**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Քաղաքացի Գեղամ Հովհաննեսի Սահակյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղու N 3 հասցեի պահեստների պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 732.9 (յոթ հարյուր երեսուներկու ամբողջ ինը տասնորդական) և 2364.29 (երկու հազար երեք հարյուր վաթսունչորս ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասերը:

2.Օտարվող հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասերի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 810 (ութ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ համապատասխանաբար 593649 (հինգ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր քառասունինը) և

1915075 (մեկ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գեղամ Հովհաննեսի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
**Որոշումն ընդունվեց**

**16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 8/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ –0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15042021-08-0045) Մովսես Խորենացու փողոց N 8/7 հասցեի 0,007 (զրո ամբողջ յոթ հազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0038-0005) առևտրի և սպասարկման սրահ կառուցելու նպատակով տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով՝ մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29042021-08-0039) Վազգեն Սարգսյան փողոց N 26/9 հասցեի 0,12097 (զրո ամբողջ տասներկու հազար իննսունյոթ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0340-0015) հանգստի գոտի կազմակերպելու նպատակով տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով՝ 10 (տասը) տարի ժամկետով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 120 000 (մեկ հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ N 5/4 ՀԱՍՑԵԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 51,55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոց N 5/4 հասցեի 51,55 (հիսունմեկ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ քաղաքացի Անդրանիկ Բաբայանի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգել 20 (քսան) տարի ժամկետով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքով օգտագործման վարձավճարի չափ սահմանել տարեկան 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով և կնքել հողամասի կառուցապատման իրավունքի օգտագործման նոր պայմանագիր՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Բաբայանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 34-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 32-րդ տողի 2-րդ սյունակի «8» թիվը փոխարինել «12» թվով և 6-րդ սյունակի «500000» թիվը փոխարինել «800 000» թվով,
   2) 44-րդ տողի 2-րդ սյունակի «11» թիվը փոխարինել «12» թվով:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

20. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ՀԱԿՈԲԻ ՂԱՐԱՂԱՋԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ 50/8 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ներել Գյումրի համայնքի բնակիչ Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանին 06.12.2011 թվականի թիվ 10274 կառուցապատման պայմանագրի հիման վրա տրամադրված Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի 50/8 հասցեի 0.002 (զրո ամբողջ երկու հազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի 17.04.2019 թվականի դրությամբ հաշվարկված 2 868 141 (երկու միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար մեկ հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարի պարտքը, որից 625 559 (վեց հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամը ապառքն է և 1 617 023 (մեկ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ տույժի գումարը:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի մասով կատարել վերահաշվարկ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Հակոբի Ղարաղազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Կիրառել արտոնություններ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կառուցման շինարարության թույլտվության 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրքի և 5408988 (հինգ միլիոն չորս հարյուր ութ հազար ինը հարյուր ութանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական վճարի նկատմամբ:

2. Կառուցապատողին ազատել սույն որոշման 1-ին կետում նշված շինարարության թույլտվության տեղական տուրքի և վճարի վճարումներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 22**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

Գյումրի համայնքի ավագանու անդամ Գ.Մաթևոսյանը չմասնակցեց օրակարգի 22-23-րդ հարցերի քվեարկությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանել 23:00-ից մինչև 7:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջարդող տասներորդ օրը:

**Որոշումն ընդունվեց**

ԼՍԵՑԻՆ.

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)**

Ավագանու անդամ Լևոն Բարսեղյանի կողմից առաջարկություն արվեց որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը՝ 2022 թվականի հունվարի 1-ը, փոխարինել 2023 թվականի հունվարի 1-ով, որպեսզի համայնքի տնտեսվարողները հնարավորություն ունենան իրենց գործունեությունը վերապրոֆիլավորելու և նոր պայմաններին համապատասխանեցնելու համար: Առաջարկությունն ընդունվեց:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա:
3. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող անհատական բնակելի տների և (կամ) հանրային սննդի օբյեկտների և (կամ) հյուրանոցների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:
**ԼՍԵՑԻՆ.**
**26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**
1.Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարում են էլեկտրոնային եղանակով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**
**ԼՍԵՑԻՆ.**
**27. ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎԳԻՆԵ ՌՈԲԵՐՏԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**
**կողմ – 23**
**դեմ – 0**
**ձեռնպահ – 0**
**ՈՐՈՇԵՑԻՆ.**
1.Սահմանել արտոնություն քաղաքացի Եվգինե Ռոբերտի Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2020-2021 թվականների մայր գումարների և տույժի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդհանուր 105 452 (մեկ հարյուր հինգ հազար չորս հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից 2020 թվականի մայր գումարը կազմում է 71100 (յոթանասունմեկ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիս ամիսը ներառյալ մայր

գումարը կազմում է 29688 (քսանինը հազար վեց հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 100788 (մեկ հարյուր հազար յոթ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիսի 14-ի դրությամբ 2020 թվականի տույժը կազմում է 4664 (չորս հազար վեց հարյուր վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եվգինե Ռոբերտի Գալոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**28. ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՈՒՇ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՐԱՆՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1.Սահմանել արտոնություն քաղաքացի Արտուշ Էդվարդի Մարանջյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2017-2021 թվականների մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդհանուր 133 678 (մեկ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից 2017-2020 թվականների մայր գումարը կազմում է 87938 (ութսունյոթ հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայր գումարը կազմում է 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 109938 (մեկ հարյուր ինը հազարինը ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, 2021 թվականի մայիսի 14-ի դրությամբ 2017-2020 թվականների տույժերի գումարը կազմում է 23740 (քսաներեք հազար յոթ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտուշ Էդվարդի Մարանջյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**29. ՌԱՖԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԵՂՈՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ)**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**կողմ – 23**

**դեմ – 0**

**ձեռնպահ – 0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Ռաֆիկ Գարեգինի Եղոյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է Ռաֆիկ Գարեգինի Եղոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի հունիսի 15-ը՝ ժամը՝ $12^{00}$:

**Որոշումն ընդունվեց**

Ս. Բալասանյան _____

Ա.Ադամյան _____

Լ.Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ.Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Գ. Գրիգորյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Աղանյան _____

Ռ.Սարգսյան _____

Ա.Մխիթարյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ.Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ.Մաթևոսյան _____

Հ.Պողոսյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք. Գյումրի**
**«14» մայիսի 2021 թվական**